# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«25» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 186

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 1-ԹԱՂԱՄԱՍ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.22 կետերի պահանջներով, նույն որոշմամբ 11-րդ կետի ,, Զ ,, ենթակետի վերաբերյալ տվյալով ինչն է 2022SEWIC6 և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ֆլորա Սեննոյի Ենգոյանի և Ահդա Սեյրանի Ղազարյանի համասեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Գառնի համայնքի 1-ին թաղամաս 2-րդ փողոց թիվ 10 հասցեում տնամերձ հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ՝***

1. Ֆլորա Սեննոյի Ենգոյանի և Ահդա Սեյրանի Ղազարյանի համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 1989թվականին կառուցված բնակելի նշանակության շինությունները համարել օրինական:
2.Հաշվի առնելով, որ որոշման առաջին կետով նշված ինքնակամ շինությունները կառուցվել են 2001թ-ի մայիսի 15-ից առաջ շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 18 մարտի 2022թվականի N 158 որոշումը
4.Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյան

2022թ. մարտի 25
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«28» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 187

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ***

1.Քաղաքացի Գարեգին Խորենի Սարգսյանին տալ օբեկտի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գառնի գյուղի Գեղարդի խճուղի 2-րդ փակուղի թիվ 1/1 հասցեի հողամասում:

2.Պարտավորեցնել Գարեգին Խորենի Սարգսյանին ՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գարեգին Խորենի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյան

2022թ. մարտի 28
գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«28» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 188

# ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱ ԱՐՇԱԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ՀԱՄԱՁԱՅ Ն ՆՈՐ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Գառնի համայնքի բնակիչ Արա Խաչատրյանին պատկանող Գառնի, Մ.Սարյան փողոց թիվ 17 հասցեում գտնվող տնամերձ հողամասից /0.2153778 հա/ առանձնացված 0,093551 հա հողամասին տրամադրել հասցե՝ համաձայն բաժանման սխեմայի.

| | |
|---|---|
| 1. Գառնի, Մ. Սարյան փառղոց թիվ 17/1 | 0,093551 հա |
| 2. Գառնի, Մ. Սարյան փառղոց թիվ 17 | 0,0602.27 հա |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյան

2022թ. մարտի 28
գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«28» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 189

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Արտակ, Նարինե, Վարդան և Շուշանիկ Մարտիրոսյանների 2022 թվականի մարտի 10-ի Գառնիի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն են հայտնել ճանաչել սեփականության իրավունքը Գառնի համայնքի Գեղարդի խճուղի 4-րդ փակուղի թիվ 6 հասցեի՝ իրենց կողմից փաստացի օգտագործվող 3731.5 քառ.մետր մակերեսով հողակտորի նկատմամբ և օրինականացնել նշված հողակտորում իրենց կողմից ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ «ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» ԱՁ-ի կողմից 2022 թվականի մարտի 25-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» ԱՁ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արտակ, Նարինե, Վարդան և Շուշանիկ Մարտիրոսյանների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գեղարդի խճուղի 4-րդ փակուղի թիվ 6 հասցեի տնամերձ հողամասում 1985 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տունը՝ ընդհանուր 71.68 քառ.մետր, 1985 թվականին բնակելի տան կիսանկուղը 32.02 քառ.մետր, 1985 թվականին բնակելի տան բ/պ կամ ա/հ 4.99 քառ.մետր, 1993 թվականին զուգարան 1.84 քառ.մետր և 1995 թվականին հարթակ՝ 1.084 քառ.մետր արտաքին մակերեսներով և նրանց կողմից փաստացի օգտագործվող հողամասի մակերեսը կազմում է 3731.5 քառ.մետր՝ փաստաթղթերում ամրագրված 3500,0 քառ.մետր մակերեսի փոխարեն (կառուցման տարեթվերի վերաբերյալ համայնքապետարանում տվյալները բացակայում են, որի համար հիմք են հանդիսացել քաղաքացի Վարդան Մարտիրոսյանի դիմումում և «ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ» ԱՁ-ի կողմից չափագրված և հաստատված հատակագծի մեջ նշված տարեթվերը):

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն

որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով, նույն որոշմամբ 11-րդ կետի ,, Զ ,, ենթակետի վերաբերյալ տվյալով ինչն է 202233KDR3 և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արտակ, Նարինե, Վարդան և Շուշանիկ Մարտիրոսյանների հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ, հաշվի առնելով այն, որ Արտակ, Նարինե, Վարդան և Շուշանիկ Մարտիրոսյանների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գեղարդի խճուղի 4-րդ փակուղի թիվ 6 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շենք-շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Ճանաչել Արտակ, Նարինե, Վարդան և Շուշանիկ Մարտիրոսյանների սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների Գառնի համայնքի Գեղարդի խճուղի 4-րդ փակուղի թիվ 6 հասցեի՝ փաստացի օգտագործվող 3731.5 քառ.մետր մակերեսով հողակտորի նկատմամբ, որն իրենց կողմից փաստացի օգտագործվել է նաև մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Արտակ, Նարինե, Վարդան և Շուշանիկ Մարտիրոսյանների ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գեղարդի խճուղի 4-րդ փակուղի թիվ 6 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ ընդհանուր 71.68 քառ.մետր, բնակելի տան կիսանկուղը 32.02 քառ.մետր, բնակելի տան բ/պ կամ ա/հ 4.99 քառ.մետր, զուգարան 1.84 քառ.մետր և հարթակ՝ 1.084 քառ.մետր մակերեսներով, համարել օրինական:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. մարտի 28

գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«29» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 190

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է սեփականատերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ ***որոշում եմ՝***

1. Մկրտիչ, Կարինե, Աշխեն, Նարինե Բաղդասարյանների և Սոֆիկ Սարիբեկյանի կողմից փաստացի օգտագործվող 0.31000 հա սեփական գյուղատնտեսական վարելահողի հողամասի ծածկագիր 07-024-0245-0012 սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ. Մարտի 29
գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«29» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 191

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՆԴԱՎՈՐ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2002թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով, որ օրինական հատկացված հողամասին կից ինքնակամ զբաղեցրած հողամասը և օրինական հատկացված հողամասը մինչև 2001թ-ի մայիսի 15-ը ունեցել է նույն սահմանագիծը և փաստացի օգտագործել և մինչ օրս օգտագործվում է սեփականատերի կողմից, քարտեզագրվել և նույն սահմանագծով ճանաչվել է որպես մեկ միավոր ինչը երևում է համայնքի հողակադաստրային քարտեզում և այն որ օրինական և նշված ինքնակամ զբաղեցրած հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի շարքում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակվում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ ***որոշում եմ՝***

1. Մկրտիչ, Կարինե, Աշխեն, Նարինե Բաղդասարյանների և Սոֆիկ Սարիբեկյանի կողմից փաստացի օգտագործվող 0.37669 հա սեփական գյուղատնտեսական հնդավոր պտղատու այգի հողամասի ծածկագիր 07-024-0384-0043 սեփականության իրավունքը ճանաչել ամբողջությամբ:
2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. Մարտի 29
գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«29» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 192-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 01-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին մասի «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ մասի՝ հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2022 թվականի փետրվարի 07-ի N 35-Ա որոշումամբ **որոշում եմ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել Գառնի համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 11-ի « Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով կազմավորելու մասին» N 01-Ա որոշումը
2. Կազմավորել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով հետևյալ կազմով՝

Տիգրան Պողոսյան –համայնքի ղեկավար

Ալիկ Ալոյան- ավագանու անդամ

Կարեն Գաբրիելյան- ավագանու անդամ

Մարուսյա Հայրապետյան-ավագանու անդամ

Հարություն Ալեքսանյան- մարզպետարանի ներկայացուցիչ

Ռոբերտ Թումոյան- մարզպետարանի ներկայացուցիչ

Արմեն Հակոբյան- մարզպետարանի ներկայացուցիչ

1. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգային նիստ հրավիրելու համար
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար Տ.Պողոսյան

2022թ. Մարտի 29
գ.Գառնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«29» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 193

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ՎԱՐՈՒԺԱՆ, ՍՈՒՍԱՆՆԱ, ԿԱՐԵՆ, ՄԵՐՐԻ ԵՎ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10.11.22 կետերի պահանջներով, նույն որոշմամբ 11-րդ կետի ,, Զ ,, ենթակետի վերաբերյալ տվյալով ինչն է 2022SOHXKP և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարուժան, Սուսաննա, Կարեն, Մերրի և Արմեն Ալոյանների համասեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզի Գառնի համայնքի 4-րդ թաղամաս 3-րդ փողոց 25 հասցեում տնամերձ հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ***որոշում եմ***՝

1. Վարուժան, Սուսաննա, Կարեն, Մերրի և Արմեն Ալոյանների համասեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա 2016 և 2018թվականներին ինքնակամ կառուցված 250.85 քմ բնակելի նշանակության շինությունները, 1.30 քմ աստիճանը, 1.35 քմ հենապատը և 6.70 քմ պարիսպը ճանաչել օրինական, համայնքապետարանի համապատասխան N 900105207212 հաշվին; 260.2 քմ * 10000* 0.1673 = 435315դրամ
Ընդամենը 435315 դրամ մուծելուց հետո:

2.Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Պողոսյան

2022թ. մարտի 29
գ.Գառնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamaynq@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«29» ՄԱՐՏԻ 2022ԹՎԱԿԱՆԻ N 194

## ԱՇՈՏ ՍԱՄՎԵԼԻ ՄՈՒՇԵՂՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Աշոտ Սամվելի Մուշեղյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի Ողջաբերդ գյուղի վարչական ղեկավարի պաշտոնում, 2022 թվականի ապրիլի 01-ից:

2.Վարձատրությունը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված պաշտոնային դրույքաչափի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համայնքի ղեկավար Տ. Պողոսյան

2022թ. մարտի 29
գ.Գառնի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք
Ստ. Շահումյան 4
garnihamayng@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«30» ՄԱՐՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N 195

### ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԵՅՐԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՆՈՐ ԲԱԺԱՆՄ ԱՆ ՍԽԵՄԱՅԻ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Գառնի համայնքի բնակիչ Սեյրան Աղաջանյանին պատկանող Գառնի, Այգեստանի փողոց թիվ 30 հասցեում գտնվող տնամերձ հողամասից /0.1417 հա/ առանձնացված 0,0705հա հողամասին տրամադրել հասցե՝ համաձայն բաժանման սխեմայի.

| | |
|---|---|
| 1.Գառնի, Այգեստանի փողոց թիվ 30/1 | 0,0705 հա |
| 2.Գառնի, Այգեստանի փողոց թիվ 30 | 0,0712 հա |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյան

2022թ. մարտի 30
գ.Գառնի